

ՄԻ ՔԱՆԻ ՃՇԴՐՏՈՒՄՆԵՐ ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑՈՒ
«ԱՂՎԱՆԻՅ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲՆԱԳՐԻ ՄԵՋ

(Աշխարհաբար քարգմանության կապակցությամբ)

Շ. Վ. ՍՄՐԱՏՅԱՆ

Մ. Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» ռուսերեն նոր
թարգմանության վրա աշխատելու ընթացքում մենք նկատեցինք մի քանի
անճշտություններ բնագրում¹, որոնք, մեր կարծիքով, կարոտ են ճշգրտման:

«Աղվանից աշխարհի պատմությունը» մինչև այժմ թարգմանված է ֆրան-
սերեն, ռուսերեն և անգլերեն²: 1969 թ. այն լույս տեսավ նաև աշխարհաբար,
բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Առաքելյանի աշխատասիրու-
թյամբ³:

Նոր լույս տեսնող բնագրական յուրաքանչյուր աշխատանքի մեջ, մեր
համոզմամբ, պետք է հաշվի առնված լինեն նախորդ գիտնականների՝ նույն
հարցին վերաբերող ուսումնասիրությունները, դիտողությունները, ճշգրտում-
ները, իսկ տվյալ դեպքում նաև թարգմանությունները, որովհետև հենց այդ
թարգմանությունների մեջ է, որ արտացոլված է թարգմանիչ գիտնականների
բանասիրական աշխատանքը:

Աշխարհաբար թարգմանելիս Վ. Առաքելյանը ձեռքի տակ ունեցել է, ինչ-
պես ինքն է ասում, «միայն Ք. Պատկանյանի ռուսերեն թարգմանությունը»⁴,
իսկ Չ. Դաուսեթի [C. J. F. Dowsett] անգլերեն թարգմանության վերաբերյալ
նա գրում է. «Քանի որ մեր թարգմանությունը ավելի վաղ էր կատարված, քան
հիշյալ անգլերեն թարգմանությունը, և մանավանդ երկու թարգմանություն-
ների բնագրական հիմքերը տարբեր են, ուստի այդ քարգմանությունը մենք

¹ Թարգմանության համար մեր ձեռքի տակ ունեցել ենք Վ. Առաքելյանի կազմած գիտական
բնագիրը, որ նա սիրով տրամադրեց մեզ, ուստի, օգտվելով առիթից, մեր շնորհակալությունն ենք
այտնում նրան:

² B o r é E u g è n e, Histoire des Aghovans par Moise Galkantouni, Extraite et tra-
duite du manuscrit arménien par E. Boré: Univers catholique. Journal de l'Institut sc.
hist., t. XXII (1846) No 136, novembre (հատվածաբար), «История Арван Мойсея Караик-
тави, писателя X века», С.-Пб., 1861, перевод К. Патканяна, «The History of the Cau-
casian Albanians by Movses Dasxuranci by C. J. F. Dowsett», London, Oxford Univer-
sity Press, 1961:

³ Մ ո վ ս ե ս Կ աղ ա ն կ ա տ վ ա ջ ի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը,
առաջարանը և ծանոթագրությունները՝ Վարդ Առաքելյանի, բնագրի հետ համեմատեց և խմբա-
գրեց Ա. Ա. Արրահամյանը: «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1969:

⁴ Նույն տեղում, էջ XVI:

հետագայում չենք համեմատել մեր քաղաքականության հետ՝ երկյուղելով հնա-
րավոր քյուրիմացություններից»⁵:

Մեզ անհասկանալի է թվում գիտնականի այդ երկյուղածությունը, քանի
որ բոլոր դեպքերում նրանց համեմատությունը միայն օգտակար կարող էր
լինել: Սակայն ինչպես կտեսնենք ստորև, Ք. Պատկանյանի ողորդման թարգ-
մանությունն էլ հարկ եղած չափով չի օգտագործված և երբեմն բնագրի որոշ
մոթ հատվածներ, որոնք ճիշտ են ընթերցված և թարգմանված Ք. Պատկան-
յանի կողմից, սխալ են աշխարհաբարում: Սա արդեն ցավալի է:

Վ. Առաքելյանը աշխարհաբար թարգմանությունը կատարել է համեմա-
տական-բնական բնագրից, որ կաղմել է ինքը՝ Մաշտոցի անվան Մատենա-
դարանի բոլոր ձեռագրերի և հրապարակի վրա եղած տպագրությունների
հիման վրա: Սա, իհարկե, մեծ առավելություն է, քանի որ գիտա-համեմա-
տական բնագիրը, որտեղ առկա են ձեռագրական բոլոր տարրնթերցվածքները,
նախապորոշություն է ընձեռում ընտրել նրանցից առավել հավանականն ու ճիշ-
տը և, հետևաբար, մենք իրավունք ունենք թարգմանչից պահանջելու առավել
ճշգրիտ թարգմանություն: Այս անհրաժեշտ ծանոթությունից հետո առանձին
հատվածներով անդրադառնում ենք Մ. Կաղանկատվացու բնագրի ճշգրտման
կարոտ տեղիներին և աշխարհաբար թարգմանության մեջ սպրդած որոշ սխալ-
ներին, ըստ որում, համոզված ենք, որ առաջարկվող սրբագրությունները օգ-
տակար կլինեն համեմատական գիտական բնագրի հրատարակության ժամա-
նակ:

1. ՔԱՆԻ՞ ՏԱՐԵԿԱՆ ԷՐ ՄԱԹՈՒՍԱՂԱՆ, ԵՐԲ ԾՆՎԵՑ ՂԱՄԵՔԸ (ԳԻՐՔ Ա, ԳԼ. Ա)

Բոլոր ձեռագրերում ունենք. «Մաթուսաղա եկաց՝ ամս ճկէ և ծնաւ զՂա-
մէք»: Այդպես էլ թարգմանված է աշխարհաբարում. «Մաթուսաղան ապրեց
հարյուր վաթսունյոթ տարի և սերեց Ղամբին»: Մինչդեռ, ըստ Աստվածաշնչի՝
«եւ եկաց Մաթուսաղա ամս հարեւո ութսուն և եօթն եւ ծնաւ զՂամէք» (Ծնունդք,
Ե, 25)⁶: Հետևաբար, հարկավոր է սույն ուղղումը մտցնել նաև Մովսես Խորե-
նացու պատմության մեջ, որտեղ տրված է «ամս հարիւր վաթսուն և հինգ»⁸:
Անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ թվականը խիստ աղավաղված է Խո-
րենացու բոլոր ձեռագրերում, և տարրնթերցվածքներում ունենք «հարիւր ութ-
սուն ութն» (ԱԻՃ ձեռագրերում), «վաթսուն և եօթն» (ՏԽ ձեռագրերում): Մեր
կողմից ընդգծված «հարիւր ութսուն» և «ե. եօթն» բառերի առկայությունը տար-
րնթերցվածքներում, որոնք համաձայն են Աստվածաշնչի համապատասխան
տարեթվերի հետ, թվում է, բավական հուսալի կռվան են այս ուղղումն առա-
ջարկելու համար: Այսպիսով, քանի որ և՛ Խորենացու, և՛ Կաղանկատվացու
աղբյուրը տվյալ դեպքում Աստվածաշունչն է, ուրեմն երկուսն էլ ուղղելի են
ըստ վերջինիս՝ «հարիւր ութսուն և եօթն»:

⁵ Նույն տեղում (ընդգծումներն այստեղ և այսուհետև ամենուրեք մերն են — Շ. Ս.):

⁶ Նույն տեղում:

⁷ Այսպես է Աստվածաշնչի 1805, 1817, 1860, 1895 թթ. հրատարակություններում:

⁸ Տե՛ս «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», աշխատության մ. Ա. Արեղյանի և Կ. Հարությունյանի, Տփղիս, 1913, էջ 16:

2. ՀՈՒՆԱՆ, ԹԷ՞ ՀԱՎԱՆ (ԳԻՐՔ Ա, ԳԼ. Բ)

Հաբեթի սերունդների ծագումնաբանությունը շարադրելիս Մ. Կաղանկատվացին հերթականությամբ թվում է նրա ութ որդիներին: Ձիոսելով առանձին աղճատումների մասին, որ կան անունների գրության մեջ, նշենք, որ այս շարքը հիմնականում համընկնում է Աստվածաշնչի հերթականությանը, մի երկու աննշան տարբերությամբ: Նախ Մ. Կաղանկատվացու մոտ պակասում է Եղիսան, որ ըստ Աստվածաշնչի Հաբեթի հինգերորդ որդին է, և ապա վերջում՝ Թիրասից հետո, ութերորդ տեղում է Քետինը, որ չկա Աստվածաշնչում: Ինչպես են առաջացել այս տարբերությունները, դժվար չէ բացատրել: Մ. Կաղանկատվացին, իրոք, ձեռքի տակ ունեցել է «Անանուն ժամանակագրության» Անդրեասին վերագրվող, բայց իրականում Հիպոդիտեսին պատկանող Liber Generationis հատվածի հայերեն թարգմանությունը, որտեղ Հաբեթի որդիները թվարկված են ձիշտ այն հերթականությամբ, ինչպես Մ. Կաղանկատվացու մոտ է: Բայց այս շարքում Մ. Կաղանկատվացու աշխարհաբար թարգմանության մեջ մի աղավաղում կա: Աստվածաշնչում Հաբեթի չորրորդ որդին Հավանն է (Ծնունդք, Ժ, 2), մինչդեռ թարգմանության մեջ հանդես է գալիս Հունանը: «Աղվանից Պատմության» ձեռագրերում կան այս անվան զանազան տարբերակներ: Վ. Առաքելյանի կողմից օգտագործված 10 ձեռագրերից հինգը CEGMS⁹ ունեն «Յաւան», մյուսների մեջ՝ «Յովնան» և «Յունան»: Մի՞թե ընտրել նրանցից: Հարկավ, առաջին հինգ ձեռագրերի «Յաւանը», մասնավորապես որ այն համապատասխանում է Աստվածաշնչի «Յաւանին»: Հետևաբար, աշխարհաբար թարգմանության «Հունանը» պետք է ուղղել «Հավան» թե՛ վերը նշված նախադասության մեջ, թե՛ քիչ վարը՝ նույն գլխում, ուր խոսվում է Հավանի որդիների մասին, ինչպես ուղղել է Մ. էմինը իր հրատարակության մեջ¹⁰:

3. ԵՐԻՓԱԹ, ԹԷ՞ ՐԻՔԱԹ (ԳԻՐՔ Ա, ԳԼ. Բ)

«Աղվանից Պատմության» աշխարհաբար թարգմանության Ա գրքի Բ գլխի շարունակության մեջ կարդում ենք. «Իսկ Թիրասի¹¹ որդիներն են Ասքանազը, որից և առաջացել են սարմատները. Երիփատը, որից՝ սավրոմատները»:

Սակայն ակնհայտ աղավաղում կա նաև «Երիփատ» անվան մեջ, որը մեր ձեռագրերում հանդես է գալիս ամենատարբեր ձևերով՝ ԵԼ-Երիփամ, ECS-Րիփամ, AGMD-Երիփաթը և վերջինը՝ Մ, ունի Երիփաթ:

⁹ Մեր գիտությունների ժամանակ հենվում ենք Վ. Առաքելյանի կազմած քննական բնագրում առկա տարբերակների վրա: Լատինական տառերը փոխարինում են ձեռագրերի համարներին A — № 1531 (1289 թ.), B — № 1725 (1664 թ.), C — № 2551 (1664 թ.), — № 3043 (1839 թ.), E — № 8035 (1848 թ.), C — № 2646 (1761 թ.), M — № 6520 (1835 թ.), — № 1855 (1855 թ.):

¹⁰ «Մովսեսի Կաղանկատուացույ, Պատմություն Աղուանից աշխարհի», ի յոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1860, էջ 4:

¹¹ Պետք է լինի «Գամերայ», ինչպես Աստվածաշնչում և ինչպես ունեն CES ձեռագրերը, ընդ որում սխալ է նաև թե՛ 2. Դաուսեթի — And the sons of Tiras were եթե՛ Գ. Պատկանյանի մոտ — и дети Тираса.

«Անանուն ժամանակագրության» առաջին հրատարակիչ Բ. Սարգիսյանը ձեռագրի¹² սխալ Եւրիփատը ուղղել է «Եւ Րիփաթ»¹³։ Մինչդեռ նույն «Անանուն ժամանակագրության» երկրորդ հրատարակության մեջ, որ կատարված է անմիջապես № 2679 մայր ձեռագրից պրոֆ. Ա. Աբրահամյանը կարծելով, թե Բ. Սարգիսյանի տպագրության մեջ «Րիփաթ» անունը սխալ է, իր հրատարակության մեջ կրկին «ուղղում է» այն՝ դարձնելով «Եւրիփաթ»¹⁴։

Զ. Դաուսեթի անդլերեն թարգմանության մեջ այդ անունը հանդես է գալիս ճիշտ ձևով՝ Riphath:

Եվ, վերջապես, ինչպես վերը տեսանք, աշխարհաբար թարգմանության մեջ այդ անունը դարձյալ աղավաղված է՝ «Եւրիփատ»։

Աստվածաշնչում Կաղանկատվացուց վերը բերված հատվածի դիմաց ունենք. «Եւ որդիք Գամերայ՝ Ասքանազ եւ Րիբաթ եւ Թորգոմայ» (Մնունդք, Ժ, 3)։ Ամենևին դժվար չէ նկատել, որ Րիբաթ անվան այս աղավաղումները հետևանք են գրչական նույն սխալի և ծագում է «Եւ» շաղկապի ու «Րիբաթ» անվան միակցումից։

Հարկ ենք համարում նշել նաև, որ «Ժամանակագրության» հունարեն հրատարակության մեջ «Ῥιψαθ» է¹⁵։

4. ԱՐՏԱՇԵՍԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՈՒՄ ՀԵՏ ԷՐ, ԱԼԱՆՆԵՐԻ՞, ԹԷ՞ ԱՂՎԱՆՆԵՐԻ (ԳԻՐՔ Ա, ԳԼ. Ը)

Մովսես խորենացին վկայում է, որ երբ Արտաշեսը կնության առավ ալանաց արքայադուստր Սաթենիկին, նրա ազգակիցներից շատերը Հայաստան եկան և հենց նրանցից է ծագում հայկական Առավելդյան իշխանական տոհմը¹⁶։ Այս դեպքերի մասին համառոտակի խոսում է նաև Մ. Կաղանկատվացին։

Սակայն «Աղուանից Պատմության» մեջ որոշ տեղերում «ալանք»-ի փոխարեն ունենք «աղուանք»։ Այսպես էլ թարգմանված է աշխարհաբար, առանց որևէ ծանոթագրության։ Ինչպե՞ս հաշտեցնել իրար հետ խորենացու և Կաղանկատվացու վկայությունները։ Անառարկելի է, որ այստեղ վերջինս օգտորվում է խորենացուց և քայլ առ քայլ հետևում է նրան¹⁷։ Հատկապես ուշադրության արժանի է այն, որ Մ. Կաղանկատվացին այդ պատմությունը սկսում է հենց Մ. խորենացու (Գիրք Բ, գլուխ Ծ) խոսքերով. «Զայսու ժամանակաւ միաբանին Աղուանք լեռնականօքն ամենեքումբք»... Եւ ձեռագրերում՝ «ամենայնի», ինչպես խորենացու մոտ։ Ինչպես տեսնում ենք, այստեղ միայն խորենացու «Ալանք»-ն է, որ փոխարինված է «Աղուանք»-ով։ Պետք է նկատի ունենալ նաև այն, որ Մ. խորենացու Պատմության ձեռագրերից մեկը՝ Խ, այստեղ ունի «ալանք» ձևը, որ նույնպես կարող էր շփոթության առիթ հանդիսա-

¹² Բ. Սարգիսյանի ձեռքի տակ եղել է Մատենադարանի № 2679 հայտնի ձեռագրից Եւրիփաթ վ. Սեթյանի կատարած ընդօրինակությունը (Վենետիկ, Ս. Ղազար, № 739)։ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 147։

¹³ «Անանուն ժամանակագրություն», Վենետիկ, 1904, էջ 3։

¹⁴ «Անանիա Շիրակացու մատենագրություն», էջ 359, տե՛ս նաև նույն տեղում, էջ 148։

¹⁵ „Chronicon paschale“, vol. I, Bonne, 1832, էջ 47։

¹⁶ Այստեղ, ի միջի այլոց, նշենք, որ Զ. Դաուսեթը թյուրիմացության մեջ է. «Առավելդան» հատուկ անունը կարդալով «արևելան»՝ նա թարգմանել է «արևելյան» բառի իմաստը — east։

¹⁷ Այս գլխի սկզբում հեղինակն ինքը շեշտում է այդ «այսամ վայրի նպաստաւոր է մեզ Քերթոզահայրն Մովսէս...»։

12 Հանդես, № 1

նալ: Ուրեմն «ալանք»-ը «աղուանք»-ով փոխարինելը թյուրիմացության կամ սխալ ընթերցանության հետևանք է: Այս հաստատվում է նաև նրանով, որ Մ. Կաղանկատվացու մի շարք ձեռագրերում, այնտեղ որտեղ խոսվում է Սաթենի-կի եղբոր գերի ընկնելու մասին, ունենք ճիշտը՝ «արքայորդին ալանաց» CELS (Ե-անաց): Պետք է ենթադրել, որ մյուս տեղերում ևս առաջ եղել է «ալանք» և միայն հետո, գրչական սխալի հետևանքով, վեր է ածվել «աղուանք»-ի: Սակայն բացառված չէ, որ այդ շփոթը հետևանք լինի այն բանի, որ, ինչպես հայտնի է, ավելի ուշ շրջանում աղվաններին երբեմն կոչել են «ալան»¹⁸ և գրիչները կարծելով, թե տվյալ դեպքում հիշատակված «ալանները» ոչ այլ ոք են, քան աղվանները՝ տեղ-տեղ «ալան»-ի փոխարեն գրել են «աղուան»: Մինչդեռ Մովսես Խորենացու կողմից հիշված ալանները ոչ մի կապ չունեն աղվանների հետ:

5. ԾԱՆՈԹՈՒԹՅԱՆ... ՊԵՏՔ Է ԼԻՆԻ՝ ԱՍՏՎԱԾԱԾԱՆՈԹՈՒԹՅԱՆ
(ԳԻՐՔ Ա, ԳԼ. ԺԱ)

Այս ամբողջ գլուխը հայոց Գյուտ եպիսկոպոսի նամակն է՝ գրված Աղվանից արքա Վաչեին: Նախաբանից անմիջապես հետո Գյուտը պատմում է Գրիգոր Լուսավորչի ձեռքով Հայաստանում կատարված հրաշքների հետևանքների մասին. «...Վաղվաղակի դռնալ սոցա ի բաղում շաւղաց մոլար ճանապարհին առ ձմարիտն Աստուած: Աստուածածանոթութեամբ և բարեկամութեամբ ի բաց ընկեցին զծանրատաղտուկ զլուծն հեթանոսաց...»: Այս հատվածը թարգմանված է. «...անմիջապես մոլար ճանապարհի բաղմաթիվ շավիղներից ետ դարձան դեպի ձմարիտ Աստված: Սանորությամբ ու բարեկամությամբ նրանք դեն նետեցին հեթանոսական ձնշող լուծը...»:

Աշխարհաբար թարգմանության մեջ բոլորովին անհասկանալի է, թե ի՞նչ «ծանոթության» մասին է խոսքը: Եվ այս այն դեպքում, երբ թարգմանիչն ինքը իր իսկ կաղմած բնագրում նախընտրել է BEL ձեռագրերի ճիշտ տարբերակը՝ «աստուածածանոթութեամբ»: Ծիշտ է հասկացել և սրբագրել բնագրի այս մասը նաև Մ. Էմինը, թեև, պետք է ենթադրել, որ իր ձեռքի տակ գտնվող ձեռագրերում չի եղել «աստուածածանոթության» բառը, «...ի բաղում շաւղաց մոլար ճանապարհին առ ի ձմարիտն աստուած, որոյ ծանօթութեամբ և բարեկամությամբ...»: Ակներև է, որ խոսքը վերաբերում է հայերի կողմից քրիստոնեության ընդունելուն, աստծուն ճանաչելուն, նրա պատվիրանները կատարելուն, որի շնորհիվ նրանք՝ հայերը (և ոչ թե սուրբ Գրիգորն ու հայոց Տրդատ թագավորը, ինչպես ենթադրում է Ք. Պատկանյանը), ձեռք են բերում աստծո «բարեկամությունը» և «դեն են նետում հեթանոսական ծանր և ձնշող լուծը»:

6. ՍԱ ԵԿԵԼ ԷՐ ՏՐԴԱՏ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՏ ԱՅՍ ԵՐԿՆԱՎՈՐ ԲԱՐԻՔՆԵՐՈՎ
(ԳԻՐՔ Ա, ԳԼ. ԺԱ)

Այս նույն գլխում այնուհետև պատմվում է, որ երբ Աղվանից Ուռնայր թագավորը Հայաստանում մկրտվելուց հետո պատրաստվում էր վերադառնալ իր

¹⁸ II. М а р р, Крещение армян, грузин... алапов, С.-Пб., 1905, էջ 165:

երկիրը, «նույն ժամանակ նրանց (իմա՝ Ուոնայրին— Շ. Ս.) շնորհվեց մի երանելի մարդ, որ եպիսկոպոս էր ձեռնադրված Հոռոմ քաղաքի կողմից. սա եկել էր Տրդատ թագավորի հետ այս երկնավոր բարիքներով:

Ուոնայր արքան եկավ, մուտք գործեց Աղվանից երկիրը...»:

Դժվար է հասկանալ, թե ինչ է նշանակում «սա եկել էր Տրդատ թագավորի հետ այս երկնավոր բարիքներով»: Մեր կարծիքով, այստեղ բնագրի աղավաղում կա, կետադրական սխալներ կան և հենց դրանք են, որ մթագնում են բնագրի իմաստը: Մեղ թվում է, թե «այս երկնավոր բարիքներով» բառերը չէին կարող վերաբերել ինչ-որ մի «եպիսկոպոսի», որի անունն անգամ չի հիշատակվում: Մենք համոզված ենք, որ այդ բառերը վերաբերում են Ուոնայր արքային, որ հենց նոր քրիստոնյա էր մկրտվել և «լցված էր սուրբ հոգով», ուստի մենք առաջարկում ենք «Ուոնայրից» առաջ եղած վերջակետը ավելի առաջ տանել և դնել «Տրդատ թագավորի հետ» բառերից հետո, իսկ հաջորդ նախադասությունը սրբագրել հետևյալ կերպ՝ «երկնային շնորհներով օժտված Ուոնայր արքան եկավ...»: Ի դեպ, հարկ է նշել, որ հիշյալ նախադասությունները հենց այդպես էլ խմբագրել է իր տպագրության մեջ Մ. էմինը՝ «ի նմին ժամանակի շնորհեցաւ նոցա այր մի երանելի՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն ի Հոռով քաղաքէ, որ եկեալ էր րնդ Տրդատայ արքային: Այսու երկնավոր բարեօք լցեալ՝ եկն Ուոնայր արքայ եմուտ յաշխարհն Աղուանից...»: Նման խմբագրություն ունի նաև Ք. Պատկանյանի ուսերեն թարգմանությունը:

Սակայն մի ուրիշ, թեև փոքր, բայց շատ կարևոր ուղղում էլ պետք է անել: Որևէ այլ աղբյուրից մեղ հայտնի չէ, որ Տրդատ թագավորի հետ Հայաստան եկած լինի ինչ-որ եպիսկոպոս: Եվ այդ չէր էլ կարող լինել: Հեթանոս Տրդատը չէր կարող հանդուրժել նրան: Ուրեմն ինչպե՞ս հասկանալ «ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն ի Հոռով քաղաքէ» բառերը: Միակ ճիշտ բացատրությունը, մեր կարծիքով, հետևյալն է: Ոչ թե այդ երանելի մարդը եպիսկոպոս էր ձեռնադրվել «Հոռոմ քաղաքի կողմից», այլ հենց ինքը Տրդատի հետ Հայաստան եկած հույներից էր, գուցե և իրոք Հոռոմ քաղաքից էր ծագումով, որին հենց տեղնուտեղը Ուոնայրի ներկայությամբ օծեցին եպիսկոպոս և ուղարկեցին Աղվանք: Իսկ որպեսզի վերը բերված հատվածը հենց այդպես էլ հասկացվի, պակասում է ընդամենը մի փոքրիկ ստորակետ «եպիսկոպոսութիւն» բառից հետո: Այդ ստորակետը անպայման պետք է ավելացնել գրաբար բնագրում, որից հետո կարելի է աշխարհաբար թարգմանել հետևյալ կերպ. «Հենց այդ ժամանակ եպիսկոպոս ձեռնադրեցին և նրանց շնորհեցին մի երանելի մարդ, Հոռոմ քաղաքից, որ (Հայաստան) էր եկել Տրդատ թագավորի հետ: Այս երկնային շնորհներով օժտված Ուոնայր արքան եկավ, մուտք գործեց Աղվանից երկիրը» և այլն:

7. ՄԵՐԺԵՑԱԻ ԿԱՄԱԻՈՐ ԽԱԻԱՐՆ, ԿԱՐԳԵՑԱՆ ԵՐԱԽԱՅՐԻՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ,
ՏԱՍՆՈՐԳԵՑԱՆ ՊՏՈՒՂՔ ԿԱԼՈՅ, ԵՒ ԸՆՁԱՆԱՅ, ԱՆԳՈՅ ԵՒ ԽԱՇԱՆՑ ԵՒ
ԱՄԵՆԱՅՆ ԸՆՏԱՆԻ ԱՆԱՄՆՈՅ...

Իր նամակի շարունակության մեջ Գյուտն այնուհետև նկարագրում է այն ձեռնարկումները, որ եղան Աղվանքում քրիստոնեությունն ընդունելուց հետո: «...թաղավորեց աներևույթ լույսը, մերժվեց կամայական խավարը, հաստատվեցին եկեղեցու առաջին պտղիները. տասնապատկվեցին կալերի, հնձանների

ու շտեմարանների բերքերը և բոլոր ընտանի անասունները: Նաև երկրի հողը նրան ժառանգություն տրվեց և հաստատվեց ու տիրեց ուղիղ կարգ ու կանոն...»: Մութ է իմաստը: Ոչ մի կերպ չի կարելի հասկանալ, թե վերջապես այդ ինչ հրաշքով տասնապատկվեցին բերքն ու անասունները, ո՞ւմ ժառանգություն տրվեց երկրի հողը: Մինչդեռ գրաբարում ոչ մի խոսք չկա բերքի ու անասունների տասնապատկվելու մասին: Այնտեղ խոսքը գնում է եկեղեցու կաղամակերպման մասին, նրա հասույթներն ու եկամուտները սահմանելու մասին: Մեջ բերենք այդ հատվածը գրաբար, որպեսզի հեշտ լինի համեմատությունը. Աղվանքում «...թագաւորեաց լոյսն աներևոյթ, մերժեցաւ կամաւոր խաւարն, կարգեցան երախայրիք եկեղեցւոյ, տասանորդեցան պտուղք կալոց և հնձանաց, անդոց և խաշանց և ամենայն ընտանի անասնոց. նաև զհող երկրին ևս ի նոյն վիճակեցոյց և հաստատեալ կալաւ կարգ ուղղութեան...»:

Նախ, ինչպես հեշտ է նկատել, մեր կողմից ընդգծված «առաջին պտղինները» բառերը փոխարինում են գրաբարի «երախայրիք» գեղեցիկ և հասկանալի բառին: Այս դեռ ոչինչ: Բոլորովին սխալ է ընկալված «տասանորդեցան» բառը, որը շատ հասկանալի և ծանոթ բառ է հայագիտության մեջ: «Նոր Հայկաղյան բառարանում» այն բացատրված է այսպես. «Տասանորդ-տասներորդ մասն, մին ի տասն բաժնից... Տուրք կամ հաս՝ մի ի տասանաց դոյիցն»: Այստեղից՝ «տասանորդել» բայը, որ նշանակում է «տասանորդ տալ առնուլ»: Օրինաց Բ գրքի ԺԲ գլխում աստծուն մատուցվելիք գոհերի ու տուրքերի մասին խոսելիս ասված է. «Եւ մատուցիր... զտասանորդս ձեր, եւ զպտուղս ձեր... եւ զանդրանիկս արջառոյ և ոչխարի ձերոյ» (Բ. Օրէնք, ԺԲ, 6): «Եւ ամենայն տասանորդ առջառու և ոչխարի»... (Ղեւտ, Իէ, 32): Այս պատվիրանն էր ահա, որ ընդունեց քրիստոնեական եկեղեցին և սահմանեց որպես եկեղեցու հասույթ¹⁹: Մ. Կաղանկատվացու վերը բերված հատվածում խոսվում է նաև եկեղեցուն հողային կալվածքներ հատկացնելու մասին, ինչպես այդ արվել էր Հայաստանում մինչ այդ: Սիայն այդ իմաստով պետք է հասկանալ «նաև զհող երկրին ևս ի նոյն վիճակեցոյց» նախադասությունը:

Մնում է միայն ասել, որ Ք. Պատկանյանը միանգամայն ճիշտ է հասկացել, և նրա ուսերեն թարգմանության մեջ կարդում ենք. «...Для церкви назначены были первые плоды, отделены десятины доходов и жатвы и полей... и всех домашних животных; даже и земля досталась на долю ее и все приняло правильный порядок».

¹⁹ Չենք ուզում ծանրաբեռնել հողվածը մեքսերումներով, բայց անհրաժեշտ ենք համարում նշել, որ Աստվածաշնչում տասանորդ բառից ունենք նաև «տասանորդել» բայը՝ ժողովրդից հասույթի մեկ տասներորդ մասը հօգուտ քահանաների վերցնելու իմաստով. «Ջայգիս ձեր տասանորդեսցէ», «Ջհօտս ձեր տասանորդեսցէ» (Ա Թագ., Ը, 15 և 17), «Պատուէր ունին տասանորդել զժողովորդն» (Եբր., է, 5) և այլն:

Այդ նույն իմաստով «տասանորդել» բայը, որքան մեղ հայտնի է, առաջին անգամ հանդիպում է 1021 թ. մի վիճագիր արձանագրության մեջ. «Ես, Սեդա, տիկնանց տիկին, դուստր մեծին Վասակա, զուգակից Վահրամա իշխանից իշխանի որդոյ Աշոտոյ իշխանից իշխանի տասանորդեցի զվաստակս դեղջն իմոյ Գաղտայի ընծայելով ի սբ ուխտս Բագնայրիս վասն յիշատակի զաւրականին Քսի հաւրն իմոյ Վասակա փոխեցելոյ յաշխարհէս»: Ն եր ս ե ս Ս ա ր գ ի ս յ ա ն, Տեղադրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 188:

8. ՈՐՈՎԷՆՏԵՎ ՆՐԱՆՔ, ՈՐՈՆՔ ԶԱՐ ԶԱՎԱԿԻ ԿՈՂՄԻՅ ԲՈՒՆՎԵՆ,
ԿՄԱՏՆՎԵՆ ԱՄԲԱՐՏԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԱՏԵՂ ՀԱՎԱՔՎԵԼՈՎ
ՍՐԱԽՈՂԽՈՂ ԿԼԻՆԵՆ (ԳԻՐՔ Ա, ԳԼ. ԺԶ)

Նախադասության իմաստը մութ է ու անհասկանալի: Ինչ է նշանակում «մատնվել ամբարտավանության» և միևնույն ժամանակ «սրախողխող լինել»:

Այս նախադասությունը գրաբարում հետևյալ կերպ է. «Քանզի որ ըմբռնեսցին ի շար զաւակէն՝ ի հպարտութիւն մատնեսցին, և ժողովեալք ի միասին սիրով խողխողեսցին»:

Առաջին հայացքից թվում է, թե «չար զավակ» ասելով պետք է հասկանալ սատանային, որ բռնելու է ոմանց և պատժելու է, «սրախողխող» է անելու, և այդպես էլ թարգմանված է աշխարհաբար: Բայց չէ՞ որ սատանան ինքը չի պատժում...

Եթե ուշադիր կարդալու լինենք այս գլուխը, կտեսնենք, որ այնտեղ խոսվում է այն բռնությունների, հալածանքների ու դավանափոխության քաղաքականության մասին, որ վարում էր պարսից Պերոզ արքան Հայաստանում և Աղվանքում: Եվ ահա հայրենասեր պատմիչը հեփթաղներից Պերոզի կրած ծանր պարտությունը, որի ժամանակ սպանվեցին շատ շատերը պարսից իշխաններից, երբ, ինչպես վկայում է Ղ. Փարպեցին, եղավ «անթիվ կոտորած բազմութեանն Պարսից», համարում է աստծո պատիժ: Ուրեմն «չար զավակ» ասելով, հեղինակը նկատի է ունեցել պարսիկներին — Պերոզին, նրա զորքերին, մոգերին:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ է նշանակում «ի հպարտութիւն մատնեսցին»: Ցավոք, այսպես ունեն բոլոր ձեռագրերը. ոչ մի ա՛յլ տարբերակ չկա:

Այստեղ ևս, մեր կարծիքով, պետք է դիմել Աստվածաշնչի օգնությանը: Եսայու մարգարեության մեջ կարդում ենք. «Զի որ ըմբռնեսցի՝ ի պաշտօնիս մատնեսցի, և ժողովեալքն ի սուր անկցին» (Եսայի, ԺԳ, 15): Ինչպես տեսնում ենք, այս է բուն աղբյուրը, որից քաղել է Մ. Կաղանկատվացին: Կասկած չի կարող լինել, որ ձիշտ է Եսայու մոտ, իսկ Մովսես Կաղանկատվացու «ի հպարտութիւնը» սխալ ընթերցման հետևանք է: Անշուշտ, նախապես եղել է «ի պարտութիւն», որն ընթերցվել է «հպարտութիւն» և ապա ավելացվել մի նոր «ի» նախդիր ևս:

Այսպիսով, վերը բերված նախադասությունը մենք առաջարկում ենք թարգմանել հետևյալ կերպ. «Որովհետև շար զավակներից նրանք, ովքեր կըբռնվեն, պարտության կմատնվեն և իրար մոտ հավաքվելով՝ սրախողխող կարվեն»: Ք. Պատկանյանի ուսերեն թարգմանության մեջ այս նախադասության սկիզբը ձիշտ է թարգմանված, իսկ վերջը՝ սխալ: Ք. Պատկանյանն ինքը նկատել է այդ և միայն հարցական նշանով է իր տարակուսանքն արտահայտել իմաստի անհարիրության վերաբերյալ: «Ибо всякий, схваченный из злого племени, будет предан гордости (?)».

9. ՎԱՂԱՐՇԱԿԸ, ՈՐ ԹԱԳԱՎՈՐԵՅ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ ՊԵՐՈԶԻՅ ՀԵՏՈ,
ՆՐԱ ՀՈՐԵՂԲԱՅՐՆ ԷՐ, ԹԷ՞ ԵՂԲԱՅՐԸ (ԳԻՐՔ Ա, ԳԼ. ԺԷ)

Այս գլուխը սկսվում է հետևյալ նախադասությամբ: «Եւ յետ բառնալոյ շարին Պերոզի շարաշար մահուամբ յաշխարհէս թագաւորէ Վաղարշակ՝ հօրեղբայր նորա...»: Մինչև այժմ բոլոր թարգմանիչներն էլ թարգմանել են «հօրեղ-

բայր»։ Ք. Պատկանյանի ռուսերեն թարգմանության մեջ կարդում ենք «...брат отца его Валарсак», Չ. Դաուսեթի անգլերենում՝ «his father's brother-Valaršak» և վերջապես Վ. Առաքելյանի աշխարհաբարում՝ «նրա (խոսքը Պերոզի մասին է— Շ. Ս.) հորեղբայր Վաղարշակը»։ Անհրաժեշտ ենք համարում նշել, սակայն, որ Չ. Դաուսեթը տողատակի ծանոթագրության մեջ, հենվելով Ղ. Փարպեցու վկայության վրա, նշում է, որ Վաղարշակը Պերոզի եղբայրն էր։ Եվ իրոք, Ղազար Փարպեցին վկայում է, այն էլ ոչ թե մեկ, այլ երեք անգամ, որ Վաղարշակը Պերոզի եղբայրն էր։

Առաջին անգամ այդ մասին խոսվում է Ձէ հատվածում. Հաղարավուխտը լսելով «զսպանումն Պերոզի և զանթիւ կոտորած բաղմութեանն Պարսից», հավաքում է արեաց ավագանու մնացորդներին և բոլորի հավանությամբ որոշում են զա՛հ բարձրացնել Վաղարշին, «որ էր եղբայր թագաւորին Պերոզի»։

Մովսես Կաղանկատվացին, որն, անշուշտ, օգտվել է Ղազար Փարպեցուց, հավանաբար, վերցրած է եղել հենց այս առաջին վկայությունը՝ «որ էր եղբայր»։ Եվ բոլորովին անհավանական չի լինի, եթե ասենք, որ «էր» օժանդակ բայը արտագրության ժամանակ ընկնէր։ Եւ որովհետեւ հնում բառանշատում գրեթե չէր կիրառվում, ապա ստացվել է «որեղբայր»։ Հաջորդ ընդօրինակության ժամանակ, գրիչը, կարծելով թե «որեղբայր» բառը պետք է լինի «հորեղբայր» (հօրեղբայր), բառասկզբում ավելացրել է մի «հ»։ Այսպիսով՝ «որ էր եղբայր» բառերը դարձել են «հորեղբայր», այնուհետեւ՝ «հօրեղբայր»։

Նշենք նաև, որ հօգուտ մեր սրբագրության վկայում է նաև Կիրակոս Գանձակեցին, ըստ որի նույնպես Վաղարշակը Պերոզի եղբայրն է. «...Պերոզ... սպանաւ ի հեփթաղաց։ Եւ թագաւորէ Վաղարշակ եղբայր նորա»²⁰։ Justi-ն սխալ է համարում արաբական և պարսկական աղբյուրների տվյալները, որոնց համաձայն Վաղարշակը Պերոզի տղան և Կավատի եղբայրն է, նախապատվությունը տալով հայկական աղբյուրներին²¹։ Ուստի մեր առաջարկած այս ուղղումը պետք է մտցնել Մ. Կաղանկատվացու բնագրի մեջ։

10. ՆՐԱՆՑԻՑ ՈՉ ՈՔ ՉԻ ԱԶԱՏՎՈՒՄ, ՄԻԱՅՆ ԱՆՏԱՌԱՆԻՏ ԹԱՎՈՒՏՆԵՐՈՒՄ
ԹՇՆԱՄՈՒ ԶՈՐԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԶԵՆՔՈՎ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է ԶԻՈՒ
ՎՐԱ... (ԳԻՐՔ Բ, ԳԼ. Բ)

Այս հատվածում պատմվում է, թե ինչպես Վարդան Մամիկոնյանի զինավորած հալոց փոքրաթիվ զորագունդը ջախջախում է թվով գերազանց պարսից զորքը, և նրանից ոչ ոք չի կարողանում փրկվել։ Գիտական բնագիրը կազմելիս Վ. Առաքելյանը «ասյրեալ» բառից հետո միջաձեւ է դնում և շարունակում. «և ի քաֆուցելոցն յանտառախիտ մայրիսն մի ոմն ի զօրացն թշնամեաց զինու հանդերձ ելեալ ի նիւս երիվարին...» և այլն²²։ Բայց չէ՞ որ մեր կողմից ընդգծված «ի թաքուցելոց» բառը ենթադրել է տալիս, որ «անտառախիտ մայրիներում» ուրիշ թաքնվածներ էլ են եղել։

Ինչպե՞ս վարվել թարգմանության ժամանակ։

²⁰ Կ Ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմություն Հալոց, Երևան, 1961, էջ 37։

²¹ St. Justi, Iranisches Namenbuch, Marburg, 1895, էջ 345։

²² Նշենք, որ հրատարակությունների մեջ ևս այստեղ նախադասությունը վերջանում է։ Գ. Վ. Շահնազարյանը նույնպես միջակետով է ավարտում այն, իսկ Մ. էմինը՝ վերջակետով։

Ք. Պատկանյանը, ինչպես ինքն է վկայում, քաջ գիտե, իհարկե, որ Կաղանկատվացին Բ գրքի Բ գլուխը ամբողջովին լիով է առել Եղիշեից, բայց երևի անհրաժեշտ չի համարել մանրամասն համեմատել և, ձեռքի տակ ունենալով միայն մեկ ձեռագիր, քննության առարկա հատվածը շարադրել է հետևյալ կերպ. «...никто не спасся из них. Только один из войска неприятельского, скрывшийся в непроходимой гуще лесов сел вооруженной на чужую лошадь...» և այլն: Հիմնականում նույն շարադասությունն ունի նաև Դաուսեթի թարգմանությունը: «... and one of them escaped. One of the enemy soldiers who had been hiding in the thick wood in the plain still clad in his armour mounted his horse...»

Ինչպես տեսնում ենք, այստեղ տարբերությունն այն է միայն, որ Ք. Պատկանյանի բաց թողած բնագրային «դաշտացն» բառը պահպանված է անգլերեն թարգմանության մեջ, իսկ գրաբարի «ի նիւս երիվարին» բառերը թարգմանված են ռուսերեն՝ «ուրիշի ձիու վրա» — «на чужую лошадь», իսկ անգլերեն՝ «իր ձիու» — his horse: Բայց այս չէ էականը: Երկու թարգմանություններում էլ թշնամու զինվորներից մեկը թաքնվել էր ռազմադաշտին մոտ ծառախիտ անտառում: Մեզ թվում է, որ այս երկու դեպքերում էլ, ինչպես և գիտական բնագրում, վերջակետը իր տեղում չէ և «թաքնվել» բայը չի վերաբերում թշնամու զինվորներից մեկին: Գրեթե նույն կերպ է թարգմանել և Վ. Առաքելյանը, միայն թե առանց տատանվելու նա դեն է նետում, չգիտես ինչու, իրեն խանգարող բնագրային «ի թագուցելոցն» բառը. «Նրանցից ոչ ոք չի աղատվում, միայն անտառախիտ թավուտներում թշնամու զորականներից մեկը զենքով (ձիշտ կլինե՛ր՝ զենքն առած — Շ. Ս.) բարձրանում է ձիու վրա...» և այլն, խախտելով նախադասության թե՛ շարադասությունը, թե՛ իմաստը:

Վերը մենք նշեցինք, որ Մ. Կաղանկատվացին «Աղվանից Պատմություն» այս գլուխն ամբողջությամբ շարադրել է՝ քաղելով Եղիշեից: Փորձենք, ուրեմն, վերականգնել Կաղանկատվացու բնագիրը Եղիշեի օգնությամբ:

Եղիշե (էջ 77)

...Եւ ոչ գտանէր ոք ամենևին ի նոցանէ ապրեալ և թագուցեալ յանտառախիտ մայրիս դաշտացն: Բայց մի ոմն ի զօրականէ՝ թշնամեացն զինու հանդերձ ելեալ ի նիւս երիվարին անցանէր ընդ մեծ գետն...

Կաղանկատվացի

...Եւ ոչ գտանէր ոք ի նոցանէ ամենևին ապրեալ. և թաքուցելոցն¹ յանտառախիտ մայրիս² դաշտաց³ մի ոմն⁴ ի զօրացն թշնամեաց⁵ զինու հանդերձ ելեալ ի նիւս երիվարին անցանէր ընդ մեծ գետն...

Մենք անհրաժեշտ համարեցինք այստեղ տողատակում Կաղանկատվացու ձեռագրերից բերել նաև շատ կարևոր տարբերակները, որպեսզի ցույց

¹ Ըժէկէ — ի զօրաց:

¹ BCEL ձեռագրերը ունեն՝ ապրեալ և թագուցեալ

² MKC — մայրիս

³ ADGC — դաշտացն

⁴ BCE — իսկ մի ոմն փոխ. ոմն,

L — իսկ մի ոմն

⁵ ADGMKC — թշնամեացն

տանք, որ նրանք վերև բարձրացնելու ղեկավարում Կաղանկատվացու բնագիրը գրեթե նույնանում է Եղիշեի բնագրի հետ: Այստեղ հատկապես արժեքավոր են BCEL ձեռագրերի «ապրեալ և թագուցեալ» և «իսկ մի ոմն» տարընթերցվածքները: Թվում է, թե այս համեմատությունից հետո այլևս որևէ առարկություն չի կարող լինել Կաղանկատվացու բնագիրը ըստ Եղիշեի վերականգնելու դեմ: Ուստի մենք առաջարկում ենք հետևյալ խմբագրությունը. «... Եւ ոչ գտանէր ոք ի նոցանէ ամենեին ապրեալ և թագուցեալ յանտառախիտ մայրիս դաշտացն: Իսկ մի ոմն ի զորաց թշնամեացն զինու հանդերձ ելեալ ի նիւս երիվարին անցանէր ընդ մեծ դետն...» և շարունակությունը ինչպես ձեռագրերում, և ըստ այդմ թարգմանել. «...և նրանցից ոչ ոք չեղավ, որ փրկվեր, թաքնվեր դաշտավայրի ծառախիտ անտառներում: Թշնամու զորքերից միայն մեկը զենքն առած թռավ ձիու վրա, անցավ մեծ գետը...» և այլն:

11. ...ՈՐԸ ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԸՆԴՈՒՆԵՅԻՆ ՍՈՒՐԲ ԳՐՔԻՑ՝ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻՑ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ, ՆԻԿԻԱՅԻ ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՈՒԹԻ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆԻ ՈՒ ԵՓԵՍՈՍԻ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐԻ ԵՐԻՅՍ ԵՐԱՆԵԼԻ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԻՋՈՅՈՎ... (ԳՐՔ Բ, ԳԼ. Է)

Այս ամբողջ զուխը հայոց Հովհաննես կաթողիկոսի և հեղինակավոր եպիսկոպոսների նամակն է՝ ուղղված Աղվանից եպիսկոպոսներին՝ դավանաբանական հարցերի շուրջը: Հարկ ենք համարում նշել, որ այդ ամբողջ նամակը պահպանվել է նաև «Գիրք թղթոցում», թեև չնչին տարբերություններով, բայց և երբեմն կարևոր տարընթերցվածքներով, ուստի մենք կվկայակոչենք նաև խնդրո առարկա հատվածի տարընթերցվածքները «Գիրք թղթոցից»:

Գրաբարում ունենք. «...Հաստատուն ունելով զհաւատս ուղղափառութեան, զոր ընկալան հարքն մեր ի Սրբոց Գրոց՝ Հին և Նոր [Լ և «Գիրք թղթոցը» ունեն ի հին և ի նոր] Կտակարանաց ի ձեռն սրբոյն Գրիգորի և երիցս [BCEL-երից, «Գիրք թղթոց»-յերից] երանեալ [BCEL և «Գիրք թղթոց»-երանելեաց] ժողովոյն [AGMKC- ժողովոց, D- ժողովոցս, «Գիրք Թղթոց»- ժողով- պետք է ուղղել ժողովոց]՝ երեք հարիւր ութ և տասանաց ի նիկիա, հարիւր յիսնիցն ի Կոստանդնուպօլիս և երկերիւրոցն յԵփեսոս, որոց...» և այլն:

Տարակույս չի կարող լինել, որ խոսքն այստեղ առաջին երեք տիեզերական ժողովների մասին է, որոնց հավատո հանգանակը ընդունել էր հայոց եկեղեցին, և որոնք հիշատակված են վերևում մեջ բերված հատվածում: Հենվելով նշված տարընթերցվածքների վրա, մենք առաջարկում ենք հետևյալ խմբագրությունը:

«...հաստատուն ունելով զհաւատս ուղղափառութեան, զոր ընկալան հարքն մեր ի Սրբոց Գրոց՝ ի Հին և ի Նոր Կտակարանաց ի ձեռն սրբոյն Գրիգորի և յերից երանելեաց ժողովոց՝ երեք հարիւր եւթ և տասանց ի նիկիա, հարիւր յիսնիցն ի Կոստանդնուպօլիս և երկերիւրոցն յԵփեսոս, որոնց...» և այլն, որ պետք է թարգմանել.

«...Հաստատու պահել ուղղափառ հավատը, որ մեր հայրերը ընդունել են Սուրբ Գրքերից՝ Հին ու Նոր Կտակարաններից սուրբ Գրիգորի միջոցով և երանելիների երեք ժողովներից՝ նիկիայի երեք հարյուր տասնութի, Կոստանդնուպոլսի հարյուր հիսունի և եփեսոսի երկու հարյուրի [ժողովներից], որոնց...» և այլն:

12. «ԱՅԼ ՍԼԱՅԱՆ ԻՆՉՊԵՍ ԱՐԾԻՎՆԵՐ ԲՈԱՌ ՄԵԾ ԳԵՏԻ ՄՈՏՈՎ» (ԳԻՐՔ Բ, ԳԼ. ԺԲ)

Խոսելով Հերակլի դեսպան Անդրէ իշխանի հետ Զերու խաբանի ուղարկած հաղար ընտիր հեծյալների մասին, Կաղանկատվացին գրում է. «Սլացեալք որպէս զարծուիս առ մեծ գետովն Կուրայ»։ աշխարհաբար թարգմանության մեջ կարդում ենք. «...սլացան ինչպես արծիվներ Բոառ մեծ գետի մոտով...»։ Բայց որտեղից է վերցրել Վ. Առաքելյանը այս գետի անունը՝ «Բոառ», երբ ոչ մի ձեռագիր և ոչ մի տպագիր հրատարակության մեջ նման բան չկա։ Կարելի էր ենթադրել, որ այն վրիպակ է։ Բայց ոչ. «Բոառը» նույնիսկ ծանոթագրված է, ուրեմն այն պատահական սխալ լինել չի կարող։ Ահա թե ինչ ենք կարդում 145 ծանոթագրության մեջ. «Բոառը գետի անուն էր Դերբենդի մոտերքը»։ Եվ այսքանը միայն։ Դժբախտաբար, Վ. Առաքելյանը չի նշել աղբյուրը, թե որտեղից է վերցրել այս անունը։ Մեր կարծիքով, պետք է վերականգնել ձեռագրերի «առ մեծ գետովն Կուրայ» և այդպես էլ թարգմանել։ Այդպես են թարգմանել Բ. Պատկանյանը և Զ. Դաուսեթը։

13. «ԵՐԿԻՐԸ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ԱՂԱԽՆՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԹՈՌԸ ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՆ ԴԱՄԱՍԿՈՍ...» (ԳԻՐՔ Բ, ԳԼ. ԻԷ)

Գրաբարում ունենք «զի թողեալ զերկիր աղախնոյն՝ արկանէին զաթոռ տէրութեանն ի Դամասկոս»։ Հեղինակի միտքը շատ պարզ է ու հասկանալի։ Խոսքը Աբրահամի կնոջ՝ Սառայի աղախին եգիպտոսի Ագարի սերունդների երկրի՝ Արաբիայի մասին է։ Ըստ Մենդոց գրքի (ԺԶ, 1—16) Սառան, որ զավակներ չէր ունենում, ամուսնուն առաջարկում է զավակ ունենալ իր աղախնուց՝ Ագարից, որից և ծնվում է Իսմաելը։ Իսմաելից է, որ սերում են արաբները, որոնք այդպես էլ կոչվում են՝ իսմաելացի կամ ագարացի-հագարացի։ Ահա Ագար աղախնի երկիրը՝ Արաբիան են թողնում նրանք, և պետության մայրաքաղաքը փոխադրում Դամասկոս։ Ուրեմն, նախադասությունը պետք է և կարելի է թարգմանել միայն «թողնում են աղախնի երկիրը և պետության ամբողջ տեղափոխում են Դամասկոս»։

14. ...ԵՎ ԶԵՋԱՆԻՅ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՂԻԱՋԱՐԻՅ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ (ԳԻՐՔ Բ, ԳԼ. ԽԴ)

Մեծկողմանքի եպիսկոպոս Իսրայելը հոների երկրում քրիստոնեություն քարոզելով, դարձի է բերում հոների իշխան Իլիթվերին ու իր նախարարներին, հրկիզում և ոչնչացնում է նրանց զոհասեղանները և վերադառնում է Աղվանք։ Իլիթվերը իր երկու զորավարներին որպես պատգամավոր ուղարկում է Աղվանք, հայրապետ Եղիազարի և իշխան Վարազ-Տրդատի մոտ, խնդրելով նրանցից Իսրայելին ուղարկել հոների երկիրը որպես առաջնորդ։

Նույն խնդրանքով մի նամակ էլ ուղարկում են Հայաստան՝ «եպիսկոպոսապետ Սահակին և...» իշխան Գրիգորին։ Եվ հանկարծ այս նամակում կարդում ենք. «Նւ ձեզանից՝ սուրբ հայրապետ Եղիազարից խնդրում ենք մենք՝ ձեզ նրան գործակից ու հավատակից ճանաչելով, երկուսիդ էլ աղերսում ենք, որ պեսզի կատարեք մեր հոգևոր խնդրանքը»։

Այս ինչպե՞ս «Սուրբ Լպիսկոպոսապետ Սահակը», որին ուղղված է նամակը, դարձավ «սուրբ հայրապետ Եղիազար»...

Գրաբարում ունենք. «Եւ ի սրբոյ հայրապետէդ Աղուանից խնդրեալ է մեր»²³։ Միտքը շատ պարզ է. ուղում է ասել, թե այդ մասին «մենք խնդրել ենք նաև Աղվանից հայրապետ Եղիազարից»։ Մինչդեռ թարգմանիչը, որն իր կողմից ավելացրել է «ձեզանից» բառը, բոլորովին փոխել է նախադասության իմաստը։ Հավանաբար, այս շփոթության պատճառ է հանդիսացել «հայրապետ» բառի վերջում սխալմամբ թառած Դ դիմորոշ հոգը, որն այստեղ բոլորովին ավելորդ է, ուստի այն պետք է սրբագրել։

15. ԵՒ ԱԾԻՆ ՂՅՈՇԱՆ ՈՄՆ ՍԻՆԱԿԱՆ, ԶԵՌՆԱԴՐԵՑԻՆ ԵՒ ՀՆԱԶԱՆԴԵՑԱՆ ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆ ԿՐՕՆԻՑՆ (ԳԻՐՔ Բ, ԳԼ. ԽԶ)

Այս նախադասության «ղծոհան ոմն սինական» բառերը աշխարհաբար թարգմանված են. «Եվ սյունեցի Հոհան անունով մեկին բերին, ձեռնադրեցին և հնազանդվեցին քաղկեդոնական աղանդին», որ ճիշտ չէ։

Նախ՝ հայտնի է, որ Հովհաննես կաթողիկոսը Կողովիտ գավառի Բագարան գյուղից էր, ուրեմն նրան սյունեցի համարելը սխալ է։ «Սինական» պարզապես նշանակում է «սինականաց», նա, որ հետևելով նշանավոր Սիմեոն Սյունակյացին, ձգնավորական կյանք է անցկացնում բարձր մի սյունի վրա։

Այս նույն սխալը թույլ է տվել և Ք. Պատկանյանը ուսերեն թարգմանության մեջ՝ «... привели некоего Иоанна Сюнийского“..., բայց ճիշտ է Չ. Դաուսեթի մոտ՝ „And they fetehed a certain stylite called Yohan“.

16. Ո՞ՒՄ ԿԻՆՆ ԷՐ ՊՈՂՔԵՐԱՆ (ՊՈԻԼԽԵՐԻԱՆ) (ԳԻՐՔ Բ, ԳԼ. ԽԸ)

Գրաբարում ունենք. «Ի թագաւորելն շարապլուխն Մարկիանոսի Հոռոմայեցոց անդէն հրապուրեալ ի պղծոյն Պողքերայ կնոջէն իւրմէ՝ կարգընկէց նեստորականէ, վաղվաղակի պատառեալ Ելոյծ զսահման ուղղափառ հաւատոյ քաղկեդոնական հաւաքամմբն»։ Բոլորովին սխալ է թարգմանված աշխարհաբար։ Ահա այն. «Երբ թագավորում էր բյուզանդացիների շարամիտ Մարկիանոսը, անմիջապես հրապուրվեց մի կաթալույծ նեստորականի կնոջից՝ պիղծ Պողքերայից. շտապով ուղղափառ հավատի սահմանները քանդեց Քաղկեդոնի ժողով»։

Ի դեպ, նախ և առաջ նշենք, որ Վ. Առաքելյանը բոլոր դեպքերում «Հոռոմ» և «Հոռոմայեցի» բառերը թարգմանում է «Բյուզանդիա» և «բյուզանդացի», որ ճիշտ չէ։ Ապա դեն նետելով բնագրի շատ կարևոր «իւրմէ» բառը, Վ. Առաքելյանը Պողքերային դարձրել է «մի կարգալույծ նեստորականի կին», որ ճիշտ չէ։ Հայտնի է, որ Պողքերան Թեոդոս կայսեր քույրն էր, նրանից մի քանի տարով մեծ և շատ մեծ ազդեցություն ուներ կայսրության կառավարման գործերում և երբեք որևէ նեստորականի կին չի եղել։ Հայտնի է, որ ընդհակառակը, եա և իր Երկու քույրերը չեղմեցան զավատացյալներ էին և որոշել էին ընդհանրապես չամուսնանալ։ Բայց եղբոր անսպասելի մահից հետո, որպես ամենահարմար գահաժառանգ, Պողքերան 451 թ. դահ է բարձրանում և ամուսնանում է Մարկիանոսի հետ։

23 Մ. Էմինի հրատարակության մեջ՝ «Ի սրբոյ հայրապետէն...», էջ 209։

Այսպիսով Պողբերան Մարկիանոս կայսեր կինն էր և մինչ այդ ամուսնացած չի եղել:

Այս պարբերությունը Ք. Պատկանյանը թարգմանել է. «В злоправное царствование свое Маркиан Римский обольщенный скверною женою Пульхериею и расстриженным несторянином рассторгнул границы православной веры, приняв собор халкедонский».

Ինչպես տեսնում ենք այստեղ Պողբերան իրավացիորեն հանդես է գալիս որպես Մարկիանոսի կինը: Այս ձիշտ է. բայց թարգմանիչը սխալ է հասկացել «կարգընկեց նեստորականն է» բառերը և ահա հանդես է գալիս մի ուրիշ անձնավորություն ևս — «расстриженный несторянин»: Թարգմանված է տառացի, առանց խորամուխ լինելու պարբերության բուն իմաստի մեջ: Չ. Դաուսեթի թարգմանության մեջ նույնպես Պողբերան Մարկիանոսի կինն է, բայց չգիտես ինչու նրա մոտ էլ Պողբերան «ուրացող նեստորական» է:

Պողբերան ոչ թե նեստորականությունն էր ուրացել, այլ ընդհակառակը, նրա նախաձեռնությամբ Քաղկեդոնի տիեզերական ժողովում ըստ էության հաստատվեց նեստորի սահմանումը Քրիստոսի էության մասին...

Մեր կարծիքով «նեստորական» ասելով հեղինակը նկատի ունի միայն Պողբերային, իսկ «կարգընկեց» բառը չի վերաբերում որևէ կոնկրետ անձնավորության, այլ նրանով շեղվում է այն հանգամանքը, որ այդ դեպքերից քիչ առաջ՝ Եփեսոսի ժողովում, նեստորականությունն ընդհանրապես մերժվել և դատապարտվել էր: Ուստի մեր կարծիքով այս հատվածը ձիշտ կլինի թարգմանել՝ «Չարաբարո Մարկիանոսը թագավորելով հռոմայեցիների (հույների) վրա, իր կնոջ՝ պիղծ Պողբերայի թելադրանքով, որ մերժված նեստորի հետեւորդներից էր, իսկույն հեռանալով (ճշմարիտ հավատից) հրավիրեց Քաղկեդոնի ժողովը և խորտակեց ուղղափառ հավատի սահմանումները»:

17. ...ՔԱՆՁԻ ՁԵՐ Ի ԿԵՍԱՐԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ՄԻԱՅՆ ՁԵՌՆԱԴՐԵՑԱԻ ՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՈՐՔ ՅԵՏ ՆՈՐԱ ՄԻՆՁԵՒ ՅԱՅՍՈՐ... (ԳԻՐՔ Բ, ԳԼ. ԽԸ)

Այս գլխում խոսվում է եկեղեցու ինը դասերի մասին, և թե ինչպես հույները հայոց եկեղեցին կատարյալ չեն համարում այն պատճառով, որ այնտեղ չկան այդ դասերը, որ հայոց եկեղեցին պատրիարք չունի, և հայոց եկեղեցու գլուխը՝ կաթողիկոսը, արքեպիսկոպոսի աստիճան ունի միայն, ուստի քանի որ այդ այդպես է, հայ եկեղեցին պարտավոր է ենթարկվել գոյություն ունեցող պատրիարքական շորս աթոռներից մեկին՝ կա՛մ Ալեքսանդրիայի, կա՛մ Անտիոքի, կա՛մ Հռոմի, կա՛մ էլ Եփեսոսի պատրիարքին:

Բայց այս նախադասության իմաստը մոլթ է մնացել բոլոր թարգմանություններում:

Ք. Պատկանյանը թարգմանել է. «Ваш епископосапет св. Григорий рукоположен был в Кесарии и от него до сего дня». Չ. Դաուսեթի անգլերեն թարգմանության մեջ կարդում ենք նույնը. «For your St. Gregory was consecrated archbishop in Caesarea, and likewise those after him down to the present time».

Վ. Առաքելյանի աշխարհաբար թարգմանության մեջ ունենք. «Ձեր եպիսկոպոսապետ սուրբ Գրիգորը ձեռնադրվեց միայն Կեսարիայում, և նրանից հետո եկողները նույնպես այնտեղ են ձեռնադրվում մինչև այսօր»: Բայց մի՞թե

մեկ անգամ, մեկ քաղաքում, տվյալ դեպքում Կեսարիայում ձեռնադրվելը բավական չէր: Ըստ որում, դժվար չէ նկատել, որ առաջին երկու թարգմանիչները, ավելորդ համարելով, բաց են թողել բնագրից «միայն» բառը, իսկ Վ. Առաքելյանը բնագրին ավելացրել է մեր կողմից ընդգծված բառերը, որ չկան զրաբարում, ընթերցողին պարտազրկելով իր սխալ մեկնաբանությունը: Այս թարգմանություններից այն թյուր տպավորություն է ստացվում, որ հեղինակը հատկապես ուզում է շեշտած լինել, թե ո՛րտեղ է ձեռնադրվել սուրբ Գրիգորը: Բայց այդ չէ նախադասության իմաստը: Այստեղ, մեր կարծիքով, կարևորն այն չէ, թե ո՛րտեղ է ձեռնադրվել սուրբ Գրիգորը, այլ այն, թե ի՞նչ է ձեռնադրվել: Այստեղ շեշտվում է այն հանգամանքը, որ սուրբ Գրիգորը ոչ թե պատրիարք, այլ միայն արքեպիսկոպոս է ձեռնադրվել Կեսարիայում: Իսկ որպեսզի Մ. Կաղանկատվացու խոսքերը, ավելի ճիշտ է ասել, հույների մեղադրանքները հենց այդպես էլ հասկացվեն, նախադասության յուրաքանչյուր անդամ պետք է իր ճիշտ տեղն ունենա. նրանց ոչ ճիշտ դասավորությունը ամբողջովին փոխում է նախադասության իմաստը.

Այսպիսով, ճիշտ կլիներ այս նախադասությունը թարգմանել. «Ձեր սուրբ Գրիգորը Կեսարիայում միայն եպիսկոպոսապետ ձեռնադրվեց, այդպես էլ նրանից հետո եկողները մինչև օրս [եպիսկոպոսապետ են ձեռնադրվում]»:

* * *

Ավարտելով մեր հիմնական դիտողությունները բնագրի մեկնաբանության առնչությամբ, հարկ ենք համարում նշել, որ բազմաթիվ են անհաջող ձևակերպումները և նախադասությունները, այժմ անհասկանալի բառերը, որ չեն թարգմանված, և այլն: Թարգմանության ոճը ծանր է և այդ գալիս է, թերևս, բառացի թարգմանության մեթոդից, զրաբարյան շարադասությունը նույնությամբ աշխարհաբարում ևս պահպանելու ձգտումից, որի հետևանքով երբեմն մոթ է անհասկանալի է մնում առանձին նախադասությունների իմաստը: Բերենք մի քանի օրինակ.

«...նրան, որ քառասունփին միս է ուտում» (էջ 67), սխալ է, այսօր «քառասունքը» բոլորովին այլ իմաստ ունի: Պետք է լինի՝ «ով որ քառասունօրյա պասին (Մեծ պաս) միս ուտի...», զրաբարում՝ «և որ ի քառասներորդն միս ուտի»:

«...իբ հետ արծաթյա մի խաչ ունենալով, ու տեղ-տեղ ոսկուց էր պատ-բաստված և ուրի մեջ Քրիստոսի խաչից մաս էր ձուլված» (էջ 70), «...հողե մատուռ է շինում, տապանը տախտակամածում է»... (էջ 71), զրաբարում՝ «և տապան տախտակամած արարեալ», պետք էր թարգմանել՝ «և տախտակներից տապան է շինել տալիս»:

«Այդ նույն տեղում դիտում էր Արշարունի Արշավիրը, առյուծաբար գոռում և հարձակվում է»... (էջ 86): Գրաբարում ունենք՝ «Յայնմ տեղուշ դէտակն ի վեր ամբառնայր Արշաւիրն Արշարունի, գոշէր առիւծաբար և յարձակէր». պետք էր թարգմանել. «Հենց այդ ժամանակ (կամ այդ տեսնելով) աշխարհ երկնքին զցելով (կամ աստծուն ապավինելով) Արշավիր Արշարունին առյուծի պես մոնշալով»... և այլն:

Փորձեր պատկերացնել. «նրանց աշխարհ կապում էին սակավ դրամով» (էջ 119), ի՞նչ կարելի է հասկանալ «անասունների հնամենի կաշիներ», «ծխոտված պարկեր» ասելով (էջ 128): «Զիվանշիրո քարձրագլովս...» զրաբարում՝

«սակն ի վեր եղևալ» — բառացի՝ «աչքը վեր հանած», որ նշանակում է ոչ այլ ինչ, քան «աչքն աստծուն հանած», այսինքն՝ «աստծուն ապավինելով», «հույսն աստծու վրա դրած», «աստծո հույսով», կարելի է ընտրել սրանցից որևէ մեկը ըստ ճաշակի, բայց ոչ երբեք «բարձրագլուխ»։ «Պարսից շար բանակը տիրոջ կողմից ջարդ ու փշուր եղավ իրենց ժամանակը լրանալու վերջում...» (էջ 137), «...Մինչև անդամ չափահասներին և արզանդից նոր ծնված մանուկներին բռնի կերպով կորզում է» (էջ 139), «առաջին անգամ քուն մտան...» (էջ 140), «Հրամայեց նրան տալ թագավորական ամբողջ սպասքը, որի պատճառով սեղանակիցներն էլ սոսկացին» (էջ 144)։ Ինչո՞ւ «սոսկացին» կամ էլ ո՞վ էր «սոսկացեղ» սեղանակիցներից բացի։ Այստեղ հեղինակը պարզապես ուզում է ասել, թե կայսեր կողմից Զիվանշիրին ցույց տրված այդ մեծամեծ պատիվները տեսնելով՝ սեղանակիցները չափազանց զարմացան։

«Ճակատամարտի խոնումի ժամանակ» (էջ 145), «նա վեր է կենում-ընկնում» (էջ 146)։ «վեր կենալ-գնալ», «վեր կենալ-բերել» լսել էինք, բայց «վեր կենալ-ընկնելը» շատ տարօրինակ է։ «Նրանց համար, որոնք արևելքում ծովե-դերյա են» (էջ 147), սխալ է, պետք է լինի՝ «մեզ համար՝ արևելքում ծովեդերքին բնակվողներին համար», «խաղողենի» (էջ 147), էլ ե՞րբ պետք է գործածենք «որթատունկը» կամ «խաղողի վաղը» և այլն, և այլն։

Իհարկե, թարգմանչի պարտքն է բոլոր դեպքերում հնարավորության սահմաններում հավատարիմ մնալ բնագրի ոգուն և ոճին, բայց այդ չի նշանակում, թե պետք է բառացի թարգմանել։ Հայտնի է, որ բառացի թարգմանությունը երբեմն բոլորովին անցանկալի արդյունք կարող է տալ՝ աղավաղելով իմաստը։

Այստեղ ավելորդ չի լինի բերել մի երկու հատված։ Բայց քանի որ տեղի սղոթյան պատճառով շենք կարող առանձին-առանձին քննել յուրաքանչյուր բառ, նրա տեղն ու դերը տվյալ նախադասության մեջ, ուստի կողք-կողքի տալիս ենք Վ. Առաքելյանի և մեր աշխարհաբար թարգմանությունները, որոնց ամենամատուցներից պարզ կդառնա, թե ինչպես պետք էր թարգմանել։

ՀԱՏՎԱԾ Ա, ԳԻՐՔ Բ, ԳԼ. ԺԴ, էջ 123—124

Վ. Առաքելյանի թարգմանությունը

Մեր թարգմանությունը

Կոները լցված էին անուտելի ա-նասունների մսով, դրանց հետ գրված էին սկուտեղներ, որոնց մեջ աղաջրով քրջում էին իրենց ձեռքերը՝ ուտելիս... որոնցով արգանակ էին խփշտում և նույն յուղոտ-մսոտ, սառած աղտոտու-րյուններով մի բաժակից երկու կամ երեք-երեք ագահարար, առանց զգա-լու ընտիր գինին կամ ուտելի ու ձիե-րի կաքը անհագարար, ինչպես ուտած տիկերը, իրենց որովայններն էին շուտ տալիս... Դիմավորելիս կաթողիկոսը երեսի վրա երկրպագեց ու մատուցեց

Յուրաքանչյուրի (մոտ կար) մի կոնք՝ անսուրբ անասունների մսով լի, նրանց կողքին գրված էին նաև աղա-ջրով սկուտեղներ, որոնց մեջ ուտելուց առաջ թաթախում էին միսը... որոն-ցով արգանակն էին լափում և միև-նույն կեղտոտ, անթլա, յուղը վրան սառած բաժակով երկու կամ երեք մարդ հերթով անկուշտ ազահոթյամբ, տիկերի պես ուտած իրենց որովայն-ներն էին լցնում անապակ գինին, ուղ-տի կամ ձիու կաթը... Մոտենալով (նը-րան) կաթողիկոսը երկրպագեց և նրան

ընծաները. նույն ձևով նվերներ տվեց նաև բոլոր մեծամեծներին: Նրա ձեռքից ընդունեց նվերները և շափաղանց ուրախացավ նրան տեսնելով: Բազմության հետ մոտեցավ նրան ու առաջարկեց իրեն մոտ նստել միևնույն դահլիճում: Մոտ մի ժամ նայելով կաթողիկոսի երեսին, ասաց...»

մատուցեց նվերները: Այդպես նաև բոլոր մեծամեծներին (նվերներ տվեց): (Կաթողիկոսի) ձեռքից վերցնելով (նվերները) նա շատ ուրախացավ տեսնելով, որ նա իր մոտ է եկել շատերի հետ և հրամայեց նստել իր մոտ՝ այնտեղ դահլիճում, որոշ ժամանակ նայելով կաթողիկոսի երեսին՝ ասաց...»

Իրենք մի հատված ևս, բայց այս անգամ նպատակահարմար ենք գրտնում բերել նաև զրաբարը, որպեսզի հեշտ լինի անմիջապես համեմատություն կատարել նրանց միջև:

ՀԱՏՎԱԾ Բ, ԳԻՐՔ Բ, ԳԼ. ԼԴ, էջ 174—175

Վ. Առաքելյանի թարգմանությունը	Դրաբարը	Մեր թարգմանությունը
Իսկ անօրեն ըս- պանողը սուսերը կի- սով շափ դուրս քա- շած պահելով, հան- կարծակի թիկունքի կողմից հարվածում է քաջ իշխանին և ծանր վիրավորում, որովհե- տև սա իր վրա զրահ չունենր, բայց արագ չի կարողանում իշխա- նին հաղթել: Սա ևս արագորեն, ինչպես մոնչացող առյուծ, կամեցավ սուսերով գործի անցնել, սա- կայն բարձրյալը ու- ժը խլել էր նրանից՝ մատնելով նրան հենց նրա մտերիմ սիրելու ձեռքը: Առաջին ան- գամ երբ սուսերով հարձակվում է անօ- րենի վրա, այս վեր- ջինը, վահանը առաջ տալով, կանգնում է, զենքը թաղելով վա-	Իսկ անօրէն ըս- պանողն զսուսերն թե- րաքամեալ ունելով՝ յանկարծակի յետուստ կողմանէ հարկանէր զիշխանն արի՝ սաս- տիկս վիրաւորեալ, զի մերկ էր ի զրահից: Այլ ոչ կարէր ստէպ- ստէպ զնա յաղթահա- րել սրով: Աճապարէր և նա որպէս առիւծ մոնչող, կամեցեալ ծեռն ի գործ արկա- նել սուսերան, բայց զի զորութիւն բարձ- րելոյն հեռացեալ էր ի նմանէ՝ մատնելով զնա ի ձեռս ձեռնա- սուն սիրելոյն իւրոյ: Յառաջնումն նուա- զին իբրև յարձակէր սուսերան ի վերայ անօրինին, նորա յաս- պարն առեալ ընդդի- մամարտեալ արձա- նանայր. և խրեալ զը-	Բայց անգութ մարդասպանը, որ իր սուսերը նախապես արդեն կիսով շափ դուրս էր հանել [պա- տյանից] հանկարծա- կի ետևից հարվածեց քաջ իշխանին և ծանր վիրավորեց, քանի որ [նա] զրահ չունէր հա- զին: Սակայն չկարո- ղացավ իսկույն հաղ- թել իշխանին, որով- հետև նա ևս առյուծի պես մոնչալով կամե- ցավ շտապ գործի դը- նել սուսերը, բայց արդեն բարձրյալի զո- րությունը լքել էր նը- րան և մատնել հենց իր իսկ պահած-շա- հած սիրելու ձեռքը: Երբ [ջիվանշիրը] սու- սերով հարձակվեց ա- նօրենի վրա, հենց ա- ռաջին հարվածի ժա- մանակ նա վահանը

հանի մեջ, ամենևին չի կարողանում նորից դուրս քաշել և ամբողջովին մնում է այնտեղ... Տիրասպանը համարում է, թե նա արդեն շունչը փչել է, մինչդեռ պարզվեց, որ նրան կիսամահ է արել. ինքը գաղտնի դուրս է դալիս և գնում իր տունը՝ կեղծելով, որ իր վրա կասկած չտանեն, որպես թե ինքը անտեղյակ տանը քնած է եղել:	զենն ի սեռ վահանին՝ ոչ կարէր հանել զըսուրն և անդէն ամփոփի ամենևին: ...ոդւոյն ի ծոցոյն թափիլ զոլ վարկանելով տիրասպանին և կարծեցեալ կիսամահ զնա արարեալ՝ զանխլաբար արտաքս ելանէր յիւր երթալով տուն՝ կեղծաւորեալ ոչ ոնեւ կարծիս, թէ յանդէտս ի տան ննջիցէ.	դեմ տվեց և կանգնեց անշարժ: (Ջիվանշիրի) սուսերը խրվեց վահանի պորտի մեջ և նա այլևս չկարողացավ դուրս քաշել և (այդպես էլ) սուսերը մնաց այնտեղ (խորված)... Ծվ կարծելով, թե նա արդեն հոգին փչել է և կամ մահամերձ է, տիրասպանը սուս ու փուս դուրս եկավ պարտեզից և, որպեսզի իր վրա կասկած չբնկնի, գնաց տուն և ձևացրեց, թե իբր ինքը բանից անտեղյակ տանը քնած է:
--	--	--

Այս անհաջող դարձվածքների և սխալ ձևակերպումների շարքը կարելի է շարունակել, բայց թվում է, թե այսքանն էլ բավական է համոզվելու համար, որ նրանք դժբախտաբար շատ են:

Եթե գիտնական բանասերը որևէ բնագիր է հրատարակում և նրա մեջ հանդիպում են դժվարմբունքի աղավաղված նախադասություններ և անբնթնունքի բառեր, որոնց ինքը չի կարողանում անառարկելի մեկնաբանություններ տալ, ապա նա բնագիրը թողնում է անփոփոխ՝ նրանց իմաստը հասկանալը վերապահելով ընթերցողին: Սակայն այդպես վարվել չի կարող թարգմանիչը: Գիտական թարգմանությունը բոտ էություն հանդիսանում է բնագրի մեկնաբանություն և պետք է միանգամայն հասկանալի լինի բոլոր ընթերցողներին, մանավանդ տվյալ դեպքում, երբ այն ուղղված է «ընթերցող լայն հասարակությանը»:

Թվում է, որ եթե թարգմանության խմբագիրը՝ պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանը, ավելի ուշադիր լիներ, շատ անհարթություններ շտկված կլինեին գրքում: Այսուհանդերձ, որպես առաջին փորձ Մ. Կադանկատվացու «Պատմություն Ազվանից աշխարհի» գրքի աշխարհաբար թարգմանությունն անշուշտ ուրախալի երևույթ է և պետք է հուսալ, որ «Հայաստան» հրատարակչությունը կարողացնի մյուս պատմիչների գործերի աշխարհաբար թարգմանությունն ու հրատարակությունը ևս:

НЕКОТОРЫЕ ТЕКСТОЛОГИЧЕСКИЕ ПОПРАВКИ В ПОДЛИННИКЕ «ИСТОРИИ
АЛУАНКА» МОВСЕСА КАЛАНКАТУАЦИ*(В связи с переводом на современный армянский язык)*

Ш. В. СМБАТЯН

(Резюме)

Произведения древнеармянских авторов до нас дошли в поздних списках. В процессе неоднократных переписываний порой искажался и изменялся первоначальный текст. Есть искажения и в рукописях «Истории Алуанка», которые до сих пор еще не исправлены. Автор статьи, ссылаясь на разночтения различных списков «Истории Алуанка» и сличая искаженные в нем места с трудами других армянских авторов (М. Хоренаци, Л. Парпеци, Ухтанес), предлагает ряд поправок в тексте М. Каланкатуаци.

Автор касается и перевода «Истории Алуанка» на ашхарабар и делает ряд замечаний относительно стиля и языка перевода.